բերդն, Սև, Կապոյտ բալերն և էն։ Մեր ճանապարհն մի ժամ էր, անցանք Ղավախայ (բարտի) Ջրից, որ հռչակաւոր Թեռքա-բինի անտառազարդ լերան հիւսիսային ստորոտէն կը սկսի։

Ղաւախի Ջրից դէպի յարևելս այժմ մեր աջ կողմն կը բարձրանայ պատմական Կապուտայ անմատչելի լեռներն ու անտառներն, «Կապուտայ մէջէն» անուամբ, մի ժամից և ս հասած եմք ըստ Թուրքաց Կապուտայ Ջրին, ըստ քրդաց Խանտութայ Ջրին, որ սա և ս Բոզ-Թէփէ լեռնէ կիջնայ, երկար ընթացքէ մի յետոյ Կապոյտ բերդն աջ եզրին վերայ Թողլով, նաև Բախրկօլ լիճն և Խանտութայ քաղաքի աւերակներն։

Աստի մինչև Վարդէհօր Ջրի յերասխ խառնուրդն $^1/_2$ ժամ կը լինի, աստի և ս Կաղզուանայ Ջրի յերասխ խառնուրդն 2 $^1/_2$ ժամ է, սակայն մերձ Կաղզուանայ Երասխ իւր ուղղութիւնը ընդ մէջ արևելից և արևելեան հիւսիս փոխելով՝ մենք տակաւ առ տակաւ Երասխից կը հեռանանք, 2 ժամից Կաղզուան կը մնանենք։

Ս Ի Ն Ա Կ

Գաբեղենից վերայ խօսելէն առաջ փոքր ինչ ակնարկ ձգեմք Սինակի վերան։

Սինակ ընդարձակ և ունի բարձր լեռներ, որոյ յարևմուտս խոնարհած է Ալաշկերտի Գարա-Քիլիսէի վիճակն, հարաւ Իւչ-քիլիսէի (Բաղուան) դաշտն. յարևելս՝ Գայլատայ ծովակն և ի հիւսիս՝ Կողբայ վիճակն 161 գիւղերով, որք մինչև Երասխ տարածուած են։

Սինակ ունի երկու ընդարձակ լեռնահովիտներ,